**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/19 ծածկագրով «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի (բռնցքամարտի և ձյուդոյի մարզադահլիճ) կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 16.07.2026թ.

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Քանանյան

Անդամներ՝ Ս. Նունյան

Կ. Հարությունյան

Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Գ. Գևորգյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին**

---

(Հ. Քանանյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է պատասխան գրությունը:

բ) Գնման ընթացակարգի մասնակից Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

գ) Գնման ընթացակարգի մասնակից «ԹԱԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

**<u>«ԹԱԹ» ՍՊԸ-ի</u>** կողմից հայտով չեն ներկայացվել

- աշխատակազմի մասին տվյալները՝ հրավերի Հավելված N 1.2-ը և կից ձևաչափը (CV),
- տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին բավարարելու մասին՝ հրավերի Հավելված N 1.3-ը,
- նախկինում կատարած համանման (նմանատիպ) պայմանագրերի (համաձայնագրերի) պատճենները և դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար հիմնավորող փաստաթղթերը:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «ԹԱԹ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 17.07.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումը ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/19 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:*

**2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

(Հ. Քանանյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 20.07.2026թ. ժամը 10:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------------------------------ Հ. Քանանյան

Անդամներ՝ ------------------------------------------------ Ս. Նունյան

------------------------------------------------ Կ. Հարությունյան

------------------------------------------------ Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ------------------------------------------------ Ա. Մանուչարյան